



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱ
ՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ

Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ

Թագուհի Հարությունյան

ՄԱՐԶ

Վաղարշապատ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

«Վաղարշապատի հ.1 հիմնական դպրոց»

Վաղարշապատ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ	3
ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒ ՄՆԵՐԸ.....	11
ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿ.....	Error! Bookmark not defined.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց և երգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարություն ից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿի 2006 թ. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

Ներառական ուսուցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և զարգացման խնդիրներ չունեցող՝ կենսաբանորեն առողջ, երեխաների համատեղ ուսուցումն է: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է ամբողջական ներառական ուսուցման համակարգ: Մակայն ներառական ուսուցման իրականացման համար կան տնտեսական, կազմակերպչական և մանկավարժական խնդիրներ, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրում և յուրացում:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Շատ կարևոր է հիշել, որ աշակերտը դպրոցում գտնվում է սովորելու համար: Այսինքն՝ ուսուցանող փուլի ցանկացած և բոլոր տեսակի գնահատումներն արժեք ունեն միայն այն դեպքում, երբ աջակցում են ուսումնառությանը: Ուսուցիչը կատարում է բոլոր, այդ

թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության գործընթացի կազմակերպչի դերը: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար մշակված մեթոդներն իրականում շատ արդյունավետ են բոլոր աշակերտների համար:

Մ. Մոնթեսորիի¹ կարծիքով՝ երեխային պետք է անընդհատ սովորեցնել, թե նա ինչպես պետք է ցանկացած գործողություն կարողանա ինքնուրույն կատարել: Նրա խոսքով՝ կարգապահությունը ազատության մեջ է, և կարգապահությունը ևս պետք է լինի ակտիվ ու գործուն: Երբ երեխային սովորեցնում ենք շարժվել, գործել, մտածել, մենք երեխային պատրաստում ենք կյանքին, երբ սովորեցնում ենք ինչպես անշարժ նստել և լսել ուսուցչին, մենք երեխային պատրաստում ենք դպրոցին: Մարդը չի կարող ազատ լինել, եթե ինքնուրույն չէ:

Շատ կարևոր է հիշել, որ աշակերտը դպրոցում գտնվում է սովորելու համար: Այսինքն՝ ուսուցանող փուլի ցանկացած և բոլոր տեսակի գնահատումներն արժեք ունեն միայն այն դեպքում, երբ աջակցում են ուսումնառությանը: Ուսուցիչը կատարում է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության գործընթացի կազմակերպչի դերը: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար մշակված մեթոդներն իրականում շատ արդյունավետ են բոլոր աշակերտների համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ աշխատանքում շատ կարևոր է ժամանակի բաշխումը: Նրանց անհրաժեշտ է որոշակի ժամանակի բաշխումը: Նրանց անհրաժեշտ է որոշակի ժամանակ նյութը ընկալելու, յուրացնելու, գործողությունը կատարելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրանց հետ աշխատելիս կարելի է հիմք ընդունել զննականությունը՝ կատարելով շատ գործնական քայլեր: Աշխատել պարզից բարդ մանկավարժական կանոնով, ցուցաբերել անհատական մոտեցում: ԿԱՊԿ

¹ Մարիա Մոնտեսորիի - իտալացի [բժիշկ](#), [մանկավարժ](#), [փիլիսոփա](#):

ՈՒ անձանց հետ աշխատելիս կարևոր է ,որ նրանց նկատմամբ ցուցաբերվող օգնությունը լինի չափավոր և ըստ անհրաժեշտության:Առավել նպատակային է անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի/աշակերտի նկատմամբ,հաշվի առնել այն բոլոր պայմանականություններն ու առանձնահատկությունները, որոնց առնչվում է տվյալ խնդիրն ունեցող անձը: Այս կոնտեքստում չափազանց կարևոր են ուսուցչի դերը և նրա մասնագիտական համակողմանի զարգացվածությունն ու նրբանկատությունը: Այսպիսով ` նախընտրելի է ուսումնական ծրագրում ակտիվացնել առօրյա կյանքում օգտագործվող հմտություններ, ուսուցումը դարձնել հետաքրքրաշարժ և մատչելի, փոփոխել ուսուցման մեթոդները և ընթացքը `երեխաների հետաքրքրությունը պահպանելու համար, և հնարավորություն տալ նրանց սովորել անհատական տեմպե բով, հնարավորինս բարելավել փոխհարաբերությունները և այլն: Օրինակ `դասարանում ունենալով տեսողական խանգարումներ ունեցող աշակերտ և ուսումնասիրելով այդ խնդիրներն ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները `վերջիններիս հետ աշխատանքում նպատակահարմար է օգտագործել մի շարք միջոցներ և մեթոդներ, այդ թվում `խոսել հստակ, իրենց վե բարբերող հարցերը ուղղել իրենց, այլ ոչ թե ուղեկցողին, դասարանում կամ սենյակում եղած իրերը չտեղաշարժել, իսկ տեղաշարժելու դեպքում զգուշացնել և այլն: Տեսողական խանգարումները կարող են լինել տարբեր աստիճանի, ուստի այս պարագայում շատ հանգամանքներ կարող են փոխվել, ինչի արդյունքում այլ պահանջներ ու լուծումներ են ի հայտ գալիս : Ես իմ դասարանում ունեի թույլ տեսնող աշակերտուհի `Լիլյան, որի հետ աշխատելիս «օգտագործում էի» պահպանված տեսողությունը: Այդ ընթացքում միշտ ուշադրություն է դարձվում, որ պահպանվեն հիգիենայի կանոնները, և չճանրաբեռնվի տեսողությունը: Լիլյայի հետ աշխատելիս հիմնվում էի դիդակտիկայի վրա, օգտագործում քարտեզներ, ռեփեֆային պատկերներ: Սկզբում ըստ դասընթացի անհրաժեշտության որոշակի դիդակտիկ պարագաներ ցուցադրելիս նկատում էի, որ Լիլյան սկսում է կկոցել աչքերը ու հետագա դասապրոցեսին մասնակցելիս կցկտուր պատասխաններ է տալիս, ինչից հասկացա, որ նա թույլ տեսողության պատճառով ամբողջությամբ չի ընկալել նյութը: Իսկ հարցնել ամաչում էր և մշտապես խուսափում էր ակնոց կրելուց: Երեխան փաստորեն թույլ տեսողության պատճառով սկսել էր նաև հոգեբանական ծանրաբեռ

նվաճություն զգալ ակնոց կրելչկրելու հարցում: Համագործակցելով ծնողի հետ՝ նախ սկսեցինք հոգեբանական աջակցություն ցուցաբերել երեխայի նկատմամբ, այնուհետև դասապրոցեսում որևէ իր ցուցադրելիս Լիլյային հնարավորություն էր տրվում այն մոտիկից գննելու և ուսումնասիրելու, ինչի արդյունքում նա, որպես համեմատաբար լավ սովորող աշակերտուհի, այլևս ետ չէր մնում դասընկերներից: Կարևոր է նաև դասարանում բավարար լուսավորություն ապահովելը՝ սպիտակ պատերի, արևի լույսի և լրացուցիչ լուսավորության միջոցով: Բավարար պայմանների բացակայության պատճառով և ավելորդ լուսավորության առկայությամբ հաճախ գրատախտակին գրվածը չի երևում կամ վատ է երևում: Այս դեպքում աշակերտին միշտ հնարավորություն է տրվում մոտենալու և հասկանալու ինչ է գրված, այլ տարբերակով՝ ուսուցիչն ինքն է բարձրաձայն կարդում չերևացող հատվածը: Իսկ առհասարակ թույլ տեսողություն ունեցող երեխաների հա մար ավելի հարմար է նստել առաջին նստարանին նմանատիպ խնդիրներից հնարավորինս խուսափելու համար: Տեսողության խանգարումներ ունեցող աշակերտները օգտագործում են էլեկտրոնային սարքեր՝ ծրիչ (սկաներ), տպող սարքեր: Այս սարքերը սովորական գրքերը բերում են հարմար ֆորմատի՝ խոսող կամ Բրայլյան շրիֆտով: Կիրառվում են նաև շրիֆտը մեծացնող սարքեր, էկրաններ: Խանգարման յուրաքանչյուր տեսակ պահանջում է ուսումնական աշխատանքի յուրահատուկ մոտեցում: Դասարանում ունենալով կոնկրետ խնդրով աշակերտ՝ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է հիմնովին ուսումնասիրել տվյալ խնդիրը և տարվող աշխատանքների առանձնահատկությունները՝ առավելագույն արդյունավետություն ապահովելու նպատակով: Շատ կարևոր հանգամանք է անպայմանորեն հաշվի առնել ԿԱՊԿՈՒ երեխայի հոգեբանական առանձնահատկությունները՝ նրա ընկճվածությունը նվազագույնի հասցնելու նպատակակետն ունենալով: Նելլին, որ իմ աշակերտուհիներից մեկն է, ունի հենաշարժողական խանգարումներ, սակայն էությանբ և բնավորությամբ նա դասարանում լիդեր է, սիրում է հայտնել իր կարծիքը, ուշիուշով հետևում է մյուսների դատողություններին և շատ հաճախ դիտողություններ անում: Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական բարենպաստ պայմանները և կրթության որակն ապահովելու նպատակով դասասենյակներում նստարանները չպետք է սահմանափակեն աշակերտների շարժումները և անհրաժեշտության դեպքում պետք է հեն

արան հանդիսանան: Նրանց սոցիալական ադապտացիան կատարվում է երկու ուղիով՝ առաջինը շրջապատը երեխաներին հարմարեցնելը (սայլակներ, ձեռնափայտեր, հեծանիվ և այլն), երկրորդը՝ երեխաներին շրջապատին հարմարեցնելը: Որոշ աշակերտների համար ավելի լավ է նստել գույգերով, ուստի անհրաժեշտ է թույլ տալ նրանց նստել ընկերներից մեկի հետ: Նրանց հետ տարվող աշխատանքների առանձնահատկություններից են: Անհրաժեշտ է ապահովել լրացուցիչ միջոցներ (ներքնակներից, բարձերից, փայտե բլոկներից կամ ավտոդողերից ճկուն հարմարանքներ), սովորողի նստարանը դարձնել հարմարավետ, այդ թվում նաև խմբերով աշխատելու համար, կրճատել լսարանում ավելորդ նստարանների և կահույքի քանակը. դրանք խոչընդոտում են ազատ տեղաշարժումը: Գրատախտակը պետք է ամրացված լինի այնպիսի բարձրության վրա, որ հասանելի լինի անվասայլակում նստած աշակերտներին: Ստեղծվեն պայմաններ, որոնք կապահովեն հեն աշարժողական խնդիրներով երեխաներին մյուս աշակերտների հետ մասնակցելու դասերին:

Անհրաժեշտության դեպքում պարբերաբար օգնել աշակերտին՝ փոխելու իր դիրքը : Այս պարագայում շատ կարևոր են նաև մյուս աշակերտների պատրաստակամությունը և հոգատարությունը մեկը մյուսի նկատմամբ: Ամեն առավոտ սահմանված հերթականությամբ դասընկերները դիմավորում են Նելլին, վերցնում նրա պայուսակը և ուղեկցում մինչև դասարան: Համակողմանի աշխատանքի և առանձնահատկությունների յուրացման շնորհիվ ներառական ուսուցումն ավելի արդյունավետ է դառնում: Աշխատանքների այլ առանձնահատկություններ են պահանջում շարժողական գերակտիվություն ցուցաբերող աշակերտները: Նպատակահարմար է նրանց թույլ տալ դասերի ժամանակ քայլել, դրսևորել շարժողական ակտիվություն, ուշադրությունը երկարատև կենտրոնացնել: Դժվարությունների դեպքում ուսուցիչները պետք է լինեն համբերատար, հարգանքով վերաբերվեն յուրաքանչյուր երեխայի ուսուցման անհատական ոճին, պարբերաբար փոփոխեն սովորողի գործունեության տեսակը: Ուսուցիչների համար կարևոր է նաև ընդունել, որ երեխաները տարբեր կերպ են սովորում, տարբեր արագությամբ և, այդ տարբերությունները հաշվի առնելով, պլանավորեն պարապմունքները, պլանավորել գործողություններն ըստ իրադրության, այլ ոչ թե սահմանված ուսումնական պլանի համաձայն, համագործակցել

ծնողների հետ, ճկուն և ստեղծագործաբար լսարանում արձագանքել բոլորի և առանձին վերցրած յուրաքանչյուրի պահանջներին, հաշվի առնել, որ յուրաքանչյուր լսարանում կան որոշակի դժվարություններ ունեցող երեխաներ : Կարևոր է, որ աշակերտները սովորեն միասին և կիսեն պատասխանատվությունը: Օրինակ՝ Սենիկը, որ ամբողջ դասի ընթացքում համարյա չի նստում և կանգնած է անցկացնում, սկզբնական շրջանում մյուսները դժգոհում էին, սակայն ժամանակի ընթացքում ընտելանալով Սենիկին՝ ուսուցչի միջամտությամբ աշակերտները սկսեցին հարմարվել և պատասխանատվությամբ վերաբերվել իրենց ընկերոջը: Սենիկին նախատելու և անընդմեջ նկատողություն անելու փոխարեն երեխաների ուշադրությունը հրավիրեցի այն փաստի վրա, որ Սենիկը ամենայն հավանականությամբ ճարտարապետ է դառնալու, քանի որ սիրում է կանգնած աշխատել: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Սենիկը սիրում է նկարել, և այդուհետ սկսել է գծագրական աշխատանքներ կատարել, որոնք հաճախակի բերում է՝ ցույց տալու, ինչն էլ, բնականաբար, ուղեկցվում է գովեստի խոսքերով և նրա ապագայի նկատմամբ մեծ ակնկալիքներով: Սենիկի ապագայի կանխատեսումը հետաքրքրություն առաջացրեց նաև մյուսների մոտ, և յուրաքանչյուրը սկսեց պատմել և ավելի հանգամանալից մտածել իր ապագայի մասին, չնայած տարիքային առումով դեռևս վաղ էր այդ մասին մտածելը: Առանձնահատկությունների յուրահատուկ փունջ է ներկայացնում նաև աուտիզմը, որի դեպքում դիտվում է՝ սոցիալական համագործակցության որակական խանգարումներ, շփման կարողությունների որակական խանգարումներ, վարքի, հետաքրքրությունների և գործունեության տեսակների սահմանափակ կրկնվող և ստերիոտիպ մոդելներ կամ ձևեր: Աուտիզմի հանդիպելու հավանականությունը մեր օրերում ավելի մեծ է, քան իլությունը, կուրությունը միասին վերցրած: Աուտիզմի բնորոշ հատկանիշներից կարելի է նշել հետևյալ կարևոր հատկանիշները՝ վարքին բնորոշ է միօրինակություն, բնորոշ է նույնականության պահպանման ֆենոմենը, որը դրսևորվում է նրանում, որ երեխան ձգտում է պահպանել սովորական իրավիճակը, չի հանդուրժում շրջապատում ոչ մի փոփոխություն: Փոփոխությունների հանդեպ ռեակցիաները կարող են դրսևորվել անհանգստության, վախերի, ագրեսիայի, հիպերակտիվության, ուշադրության խանգարումների միջոցով: Ստերիոտիպությունը դրսևորվում է նաև խաղում: Նրանց բնորոշ է միատեսակ, անիմաստ գործողությունների

անընդհատ կրկնումը, եթե անգամ խաղալիքը վերցնում են, ապա դա կիրառում են ոչ ըստ նշանակության: Աուտիզմով երեխաները սիրում են խաղալ ջրով, սահող նյութերով (ավազ), սակայն այդ խաղը նույնպես նպատակաուղղված բնույթ չի կրում, օրինակ՝ ավազից որևէ բան չեն ծեփում: Աուտիզմով երեխաների ներաշխարհի առանձնահատկություններին է աուտիստիկ երևակայությունը, որի հիմնական հատկանիշներն են իրականությունն ից կտրված լինելը, իրականության հետ թույլ աղավաղված կապը: Աուտիզմին բնորոշ է նաև մտավոր գործընթացների զարգացման անհամաչափությունը: Այսպես, թվաբանական գործողություններ կատարելու փայլուն կարողության հետ մեկտեղ երեխան կարող է չհասկանալ պարզագույն խնդիրների իմաստը, կամ տարածության մեջ լավ կողմնորոշվելու կարողության հետ երեխան ի վիճակի չէ կողմնորոշվել թղթի սահմաններում : Կախված մտավոր ունակությունների տարբեր մակարդակից՝ աուտիզմով երեխաները ձեռք են բերում տարբեր մասնագիտություններ, և նրանք սովորաբար լավ մասնագետներ են դառնում: Շատ արդյունավետ են այս երեխաների հետ կազմակերպվող անհատական և խմբային պարապմունքները: Կարևոր է նաև համակարգային և բազմամասնագիտական մոտեցումը: Երկրորդ դասարանում Արթուրը, որ ունի աուտիզմի սինդրոմ, դասապրոցեսում ցուցաբերում է ցրվածություն, չի կենտրոնանում որևէ թեմայի շուրջ, սակայն կարծես ի հեճուկս այս ամենի՝ ունի երաժշտության նկատմամբ յուրահատուկ հետաքրքրվածու-

թյուն: Տանը ունենալով դաշնամուր՝ ծնողների հավաստմամբ նա օրվա մեծ մասը անցկացնում է դաշնամուրի առաջ՝ առանձնակի սեր ցուցաբերելով երաժշտական գործիքի նկատմամբ: Երեխայի հետ տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ կարելի է մեծ արդյունքների հասնել՝ տիրապետելով առանձնահատկություններին և զարգացնելով նրանք նորունակությունները: Ընդ որում՝ կարևոր է այն հանգամանքը, որ երաժշտական հակումները նա որևէ մեկից չի ժառանգել: Նույն խնդիրն ունեցող Եղիշը ևս դժվարությամբ է կենտրոնանում դասապրոցեսին: Նա ունի նկարելու և ստեղծագործելու փայլուն ձիրք: Նրա մոտ հատկապես լավ են ստացվում դիմանկարները: Հաճախ դասի ընթացքում նա սկսում է վեր կենալ, շրջել դասարանում՝ կարծես ձանձրույթը ցրելու: Սակայն մեծ հաճույքով նստում է դպրոցական նստարանին, երբ նրան հանձնարարում են նկարել կամ գունավոր

ը թողթերով որևէ աշխատանք պատրաստել: Աշակերտին ոգևորելու համար շատ հաճախ նրա աշխատանքները փակցվում են դպրոցի միջանցքների պատերին: Այս Մեկ այլ աշակերտ՝ Գեորգին, որը ևս աուտիզմի սինդրոմ ունի, սիրով և մեծ հետաքրքրությամբ նայում էր դպրոցի պատին փակցված նկարներին ու երկար ուսումնասիրում: Նկատելով այս հանգամանքը՝ դասարանի պատին ավելացրի ավելի հետաքրքրաշարժ նկարներ, որպեսզի դասի ընթացքում դասարանով շրջելիս Գեորգին կենտրոնանա այդ նկարների վրա և բավարարի իր հետաքրքրությունը: Հետո նկատեցի, որ երբ երեխաներին հանձնարարում էի որևէ բան պատմել, նա անպայմանորեն ուզում էր մասնակցել, ու երբ նրան այդ հնարավորությունը տրվում էր, նա սկսում էր պատմել դասարանում փակցված նկարների բովանդակությունը: Այլ բնույթի աշխատանքներ են տարվում մտավոր հետամնացություն ունեցող աշակերտների հետ: Նրանց մտածողությունն ունի որոշ առանձնահատկություններ. նրանք դժվարանում են վերլուծել, համադրել, ընդհանրացնել: Մտածողությունը աչքի է ընկնում կտրտվածությամբ, անքննադատականությամբ, որպես կանոն նրանք գոհ են իրենցից, չեն նկատում իրենց սխալները, չեն հասկանում առարկաների և երևույթների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը : Առաջանում են նաև հիշողության հետ խնդիրներ: Երեխաները դժվարությամբ են մտապահում, ինֆորմացիան պահպանում և հատկապես վերարտադրում: Վերարտադրելիս հիմնականում սխալվում են, իսկ առնում են իրադարձությունների հաջորդականությունը: Նրանք իրենց մտային ունակություններով մի քանի տարվա կտրվածքով ետ են մնում իրենց հասակակիցներից, ուստի ուսուցիչը պետք է անհատական մոտեցմամբ և առանձին մեթոդներով աշխատի այս խմբի հետ: Դավիթը և Միլենան չորրորդ դասարանում արդենունեին այս սինդրոմը: Նրանց հաճախակի հանձնարարվում էր արտագրություններ, որը նրանք կատարում էին մեծ սիրով, ներգրավվում էին դասին՝ առավելագույն չափով օգտագործելով իրենց մտային կարողությունները: Նրանք դժվարանում են ինչպես արտահայտել, այնպես էլ գրի առնել սեփական մտքերը: Սակայն նկատելի է, որ եթե Միլենան խուսափում է իր կարծիքն հայտնելուց, ապա Դավիթը, արդեն իսկ գիտակցելով իր տղամարդկային էությունը, չի ցանկանում ետ մնալ մյուս տղաներից, և թեկուզև դժվարությամբ, բայց ձգտում է հնարավորինս «լսելի դարձնել իր խոսքը»: Մի անգամ նույնիսկ, երբ գրում էինք մեր երազանքների մասին,

ի զարմանս ինձ՝ Դավիթը նույնպես գրի էր առել իր մտքերը: Ճիշտ է, նա գրել էր այնպես, ինչպես խոսում է, բայց կարդալով նրա մտքերը և այդպիսով թափանցելով նրա ներաշխարհ՝ ավելի բովանդակությունը, քան թե շարադրանքը, գրելաձևը: Դավիթը երագում էր անտեսանելի գլխարկ ունենալ, որ ոչնչացնի թշնամիներին, որպեսզի ոչ մի հայ զինվոր չգոհվի: Դավիթի հետ աշխատելիս նկատելի է քայլքայլ առաջընթացը: Այսպիսով՝ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելիս ուսուցիչները պետք է հիմնական գիտելիքներ ունենան հաշմանդամության ասպարեզից, որպեսզի նրանց վերաբերմունքը և աշխատանքի մեթոդները չխանգարեն հատուկ կարիքներով երեխաներին ուսումնական ծրագրի նկատմամբ հավասար մատչելիություն ապահովելուն: Ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցիչ պետք է անհատական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ՝ հնարավորինս ներգրավելով դասապրոցեսին, ինչի համար կարևոր նախապայման են ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունների ուսումնասիրումն ու յուրացումը՝ սկսած նրանց անհատական-հոգեբանական հարթակից:

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր դասի պլանավորման ժամանակ պետք է նախատեսել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի մյուս դասընկերների հետ համատեղ աշխատանքի կազմակերպումը: Դասը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ. Պլանավորում Իրականացում Վերլուծություն Բարելավում նախ՝ հստակեցվում է ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը, ապա՝ իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սովորողի և դասարանի պահանջները: Շատ հաճախ մենք սովորողի կրթության ճիշտ կազմակերպման համար իրականացնում ենք թիմային աշխատանք, ներառում տարբեր օղակներ, ներդնում ենք մեր բոլոր ռեսուրսները, օգտագործում մեր բոլոր ջանքերը, բայց գրեթե միշտ մոռանում ենք հաշվի առնել այդ օղակի ամենակարևոր անձի՝ սովորողի կարծիքն իր կրթության կազմակերպման վերաբերյալ: Չպետք է անտեսել ինքնագնահատման դերը սովորողի գնահատման գործընթացում: Այն չափազանց կարևոր է սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու համար:

Շատ դեպքերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները նույնպես, ինքնուրույն կամ որևէ մեկի օգնությամբ, կարող են պատասխանել (նաև գրավոր) անհրաժեշտ հարցերին: Դա հետագայում հնարավորություն կտա ուսուցչին և սովորողի հետ աշխատող այլ մասնագետներին ավելի լավ ճանաչելու նրան, ծանոթանալու նրա կարողություններին, դժվարություններին, հետաքրքրություններին և կրթությունը կազմակերպելիս հաշվի առնել սովորողի բոլոր առանձնահատկությունները և կարծիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականցման և համադասարանցիների հետ փոխհարաբերությունների ձևավորման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքներն անհատական են: Այս տեսանկյունից հատկապես բարդ են մտավորն վարքաբանական խնդիրներ ունեցող աշակերտների դեպքերը: Երբ նշվածին գումարվում են նաև սոցիալական խնդիրները, ԿԱՊԿՈՒ աշակերտները ենթարկվում են կրկնակի խտրականության: Ուսուցիչներն ունեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու և դասապրոցեսին նրանց ներգրավվումն ապահովելու հետ կապված մեթոդական խնդիրներ: Նրանք մեծմասամբ որպես մեթոդ նշում են անհատական մոտեցումը, դժվարանում են անվանել պրակտիկ վարժություններ և մեթոդներ, որոնք հաճախ կիրառում են դասապրոցեսին աշակերտների պատշաճ ներգրավման համար: Ծնողների վերաբերմունքը և տրամադրվածությունը ներառական կրթական համակարգի նկատմամբ մեծմասամբ դրական է: Ծնողները կողմ են համընդհանուր ներառականության ներդրմանը՝ որոշակի բարեփոխումներով հանդերձ: Ըստ նրանց՝ համակարգը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների հասակակիցների հետ շփմանը: Ծնողների ներգրավվածությունը և ազդեցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթական գործընթացին ևս անհատական է: Սոցիալական և այլ խնդիրների պատճառով որոշ ծնողներ դուրս են մնում այս գործընթացից, ինչն իր ազդեցությունն է ունենում աշխատանքի արդյունավետության վրա: Որպես դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող հիմնական գործոնժամանակի պակասն է: Այսխնդրի հաղթահարման համար ուսուցիչների և ծնողների կողմից առաջարկվում է մեծացնել բազմամասնագիտական թիմի և ուսուցչի օգնականների ներգրավվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս. և ուրիշ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Եր., 2004: Էջ 14-19:
2. Դավթյան Մ. և ուրիշ. Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ: Եր., ԱՅՌԵՔՍ, 2002: 310 էջ:
3. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:
4. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Եր., 2005: «Նորք» գրատուն:
5. Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012: 134 էջ:
6. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա. և այլք: Դպրոցի ղեկավարում և կառավարում: Եր., ԱՅՌԵՔՍ, 2005: 129 էջ:
7. ԿԱԲԳ՝ հանրակրթության ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014 թ. հունվարի 21-ի N 37-Ա/Ք հրամանով):
8. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին. Հեշտ ընթերցվող տարբերակ: Եր., 2011: 51 էջ:
9. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների եռօրյա սեմինարի նյութեր: Եր.: 68 էջ:
10. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն):

11. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում:
12. «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 18.02.2016թ. N6 արձանագրային որոշում:
13. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշ. Համագործակցային ուսուցում: Եր., 2005: Էջեր 29, 56, 83, 84
14. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ: Եր., 2010:
15. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս. Օ. Թեստի կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքներ: Եր., 2015: 16. Միքայելյան Օ. ՀՀ հանրակրթությունում ներառված սովորողի ձեռքբերումների գնահատման շուրջ: «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր: Եր., ԵՊՄՀ, 2014: 48-54 էջ:
17. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների բազմամասնագիտական թիմի վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ: Եր., 2010:
18. Ներառական կրթությունը Հայաստանում: (Հոդվածների ժողովածու): «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Եր., 2003: 98 էջ:
19. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Վարելլա Գ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Եր.,